



# **Երևանի Կոնյակի գործարան ՓԲԸ-ի «Այգավանի» արտադրական ջրերի մաքրման կայանի կառուցման համար խորհրդատվական ծառայություններ**

**Երկիր** Հայաստանի Հանրապետություն

**Մարզ** Արարատ, գ. Այգավան

**Պատվիրատու** Երևանի Կոնյակի գործարան ՓԲԸ

**Ժամկետները** Հունիս – Նոյեմբեր, 2008թ.


### **Տեխնիկական առաջադրանք**

1. Ուսումնասիրել՝ մասնաճյուղի արտադրական տեխնոլոգիական գործընթացը, կեղտաջրերի հեռացման համակարգը, մաքրման կառուցվածքների տեղադրման համար առաջարկվող տարածքները:
2. Կեղտաջրերի ելքերի որոշում՝ օրական, ամսական և տարեկան կտրվածքների համար, և արդյունքում անհավասարաչափության ռեժիմների ստացում:
3. Արտադրական կեղտաջրերի որակական կազմի որոշում:
4. Գետի ջրի որակի և հիդրոլոգիական ռեժիմների ուսումնասիրում:
5. Մաքրման սխեմայի ընտրություն և մաքրումից առաջացող նստվածքների մշակման և հնարավոր օգտահանման առաջարկությունների մշակում:



### ***Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը***

Այգավանի մասնաճյուղի արտադրական գործընթացի և արտադրական կեղտաջրերի հեռացման համակարգի ուսումնասիրում, կեղտաջրի որակական բաղադրության որոշում, կեղտաջրի մաքրման նույնանման տեխնոլոգիաների ուսումնասիրում, տեխնոլոգիական և տնտեսական հաշվարկների կատարում, կեղտաջրերի մաքրման տեխնոլոգիայի և սխեմայի արդյունավետ տարբերակների առաջարկում:



### **Աշխատանքի նպատակն է**

Այգավանի մասնաճյուղի արտադրական կեղտաջրերի թույլատրելի աստիճանի մաքրման ապահովում անդրսահմանային ջրային ռեսուրսների աղտոտվածության նվազեցում, շրջակա միջավայրի պահպանություն: